ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ

ՀՐԱՄԱՆ

N° 058/2018-Ա
«07» հունիսի 2018թ.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԽՄԲԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածով, 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի կողմից 08.12.2017թ. թիվ 8 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման» 2018թ. ուսուցման ծրագիրը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անցկացման կարգը, ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 23.03.2018թ. թիվ 179-Ա և 18.04.2018թ. թիվ 283-Ա հրամանները՝

Հրամայում եմ

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2018թ. ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 1-ին խմբի բաշխումն ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2018թ. ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 2-րդ խմբի բաշխումն ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2018թ. ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 3-ի:

Ռեկտոր՝ **Ս. Առաքելյան**